# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ - վաճառք

| LՈՏ-ի անվանումը | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը | Մակերեսը` քմ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ` սերվիտուտների/ առկայությունը | Ճանապարհների, առկայության մասին տվյալներ | Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 64/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Տ. Պետրոսյան 1-ին նրբ. 1/5 | 11-003-0040-0350 | 421,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | նախատեսված է գլխավոր հատակագծով | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 2 947 000 |
| Լոտ 65/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Արցախի 3-րդ նրբ. 16 | 11-003-0087-0137 | 653,7 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | գրունտային ճանապարհ | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 4 575 900 |
| Լոտ 66/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Մոլդովական 12/18 | 11-003-0654-0027 | 672,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | առկա է | առկա են մինչև 50մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 4 704 000 |
| Լոտ 67/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Սարալանջի 7-րդ նրբ. 2 | 11-003-0053-0381 | 735,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | նախատեսված է գլխավոր հատակագծով | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 5 145 000 |
| Լոտ 68/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Սարալանջի 8-րդ նրբ. 2 | 11-003-0053-0378 | 726,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | նախատեսված է գլխավոր հատակագծով | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 5 082 000 |
| Լոտ 69/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Սարալանջի 8-րդ նրբ. 4 | 11-003-0053-0379 | 600,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | նախատեսված է գլխավոր հատակագծով | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 4 200 000 |
| Լոտ 70/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Սարալանջի 8-րդ նրբ. 6 | 11-003-0053-0380 | 1 069,0 | Բնակավայրերի հող | բնակելի տան կառուցման | չկան | նախատեսված է գլխավոր հատակագծով | առկա են մինչև 200մ հեռավորության վրա | ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի | 7 483 000 |

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի ելակետային տվյալներին և հատակագծին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնում` ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն` ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է Դիլիջանի համայնքապետարան ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի` 35000դրամի մուծման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար` տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին` ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, Դիլիջանի համայնքապետարանի շենք, 2-րդ հարկ:

Աճուրդը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 23-ին ժամը 11.00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն` ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2022թ. դեկտեմբերի 19-ը, ժամը 18.00: